

կումը եւ վենետիկեան արուեստին ծագումը. ոսկեղօծ դմբէթները՝
կը պատկերացնեն մարդու մտքին մէջ՝ մերթ վեհաշուք Ս. Սո-
փիան, եւ մերթ թուրք մզկիթները (մինարէները), եւ այն ճար-
տարապետական արուեստին կախարդիչ երեւոյթներուն եւ տեղւոյն
սրբութեան մէջ՝ կը դտնենք մեր շուրջը կենդանի պատկերը ժողո-
վուրդի մը, որ մեծցած ու զօրացած առուտուրով եւ աշխարհակա-
լութիւններով, աշխարհիս բոլոր երկիրներէն կը բերէր մարմարներ,
պղինձ, սիւն կամ արձան, անոնցմով գեղեցկացնելու տաճարը իր
Ս. Մարկոսին, ու խօսուին յուշարձան մ'ընելու զայն իր գործօն,
եռուզեռ կեանքին, իր մեծագործ ձեռնարկներուն, եւ քաղաքակըր-
թութեան մէջ իր ունեցած փայլուն դերին:

(Շարունակելի)

Հ. Յ. ԹՈՐՈՍԵԱՆ



ՓՈՔՐԻԿ ԱՄՊԸ

Անհուն երկնի անապատին մէջ կապոյտ
կարաւանի պէս մոլորած կը շրջիս,
Ու չես կրնար դառնալ անձրեւ կամ կարկուտ
Արծաթ թելով շղթայուելու աշխարհիս:

Կ'երթաս այսպէս ուր որ տանի քեզ քամին
Բախտի նաւակն ինչպէս՝ ծրփուն ծովէ ծով.
Հորիզոններն այնքան հեռու կը թըւին
Որ կը հիւծիս միշտ նոր երկինք փնտռելով:

Ձի կրնար քեզ կապոյտն արծուի թեւեր տալ
Եւ ոչ արփին իր շողերով օրօրան.
Ո՛րվ հէզ ամպիկ, պէտք չէ բախտին հաւատալ

Որ կը տանի ցընորքներով կորըստեան:
Երանի՛ թէ դուն յորդ անձրեւ ըլլայիր,
Թերեւս դօտի մը ծիրանի դառնայիր:

Քենիա, 30 - ժԱ - 1943

Հ. Վ. ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

ԽՕՍԻ ԱՌՎԵՆԵՏԿՈՅ ԾՈՎԸ

Պիտ՝ տենչայի նետուիլ դարձեալ
Կոհակներուդ գըրոհին դէմ,
Կռուի՛լ քեզ հետ ու չընկրկի՛լ
Ահարեկող քու մոլուցքէն:

Մարմինս յանձնած քու ջուրերուն
Մոլեղնոտած պոռչըտութիւն՝
Ապրի՛լ իմ մէջ գեհենի պէս
Ինքզինք տանջող անհաշտ աշխարհն:

Իմ ծաղկատի կեանքէս ի վեր
Սիրած եմ քու պարարտ ջուրերդ,
Քու մըռունչներդ, որոնց թովքէն

Հողիս հարբեալ՝ երգած է քեզ,
Ծանր ու խորունկ քու շարժումներն,
Ամպոտ եւ կոյր երկնի մը տակ:

ԼԻՏՈՅԻ ԱՓԵՐՈՒՆ

Կ'աղմըկէ դարձեալ այսօր իր ոըջէն
Փոթորիկ. ժայռերն, ամպերն ու երկինքն
Մառախուղի մէջ. լըռութիւն մ'անծայր
Կը պատէ քաղաքն ափունքներն ու ծով:

Աւաղն՝ հարուածեալ հովէն ու բուքէն՝
Կը փախչի խաւ խաւ. մայթերուն վըրայ
Անմարդ մենութիւն. իմ շուրջ լոկ աշնան
Տերեւներուն խօլ արշաւն անպախտուրց:

Սիրտն իմ մեկուսի, կ'ըմբռնէ այս խոր
Կախարդանքն օրուան. ճակտիս դէմ կը զգամ
Գիշերն որ տակաւ կը հըպէ թեւն իր:

Իմ կեանքս ու իմ բախտս նըման են այս մեծ
Ծովուն տոչորման. խընդրեմ, մի՛ յուզէք
Յաւի մէջ անշարժ անոնց ալիքներն:

ԱՐԱՄԱՅԻՍ ՍՐԱՊԵԱՆ

Վենետիկ, 25 - 10 - 1945